



ՎԻՇԱՊԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐՈՒՆ ՄԷՋ

Փ Ի Ի Ն Ի Կ Թ Է Ա Ր Ծ Ի Ի

ԱՆԱՀԻՏԻ մէջ՝ հրատարակած «Գորգաշինութիւնը Հայոց մէջ», ուսումնասիրութեանս ընթացքին ակնարկութիւններ բրած էի Հայկական գորգերու գծագրութեանց Վիշապի եւ Վիշապոսներու մասին: Եկատի առած վկայութիւններէս նշանակելի է (Արմենակ Սագրգեանի) «Հայկական գորգերը»² աշխատութենէն սա հատուածիկը. «Երբ Վիշապի խօսք կ'ըլլայ, ենթադրութիւն մին է այդ». ես ալ իմ կարգիս Mr. Arthur Upham Popeի տուած պատասխանիս մէջ կը գրէի «Հայկական Վիշապ գորգերը ունին գծածեւեր որոնք Վիշապներու կը նմանին (վտահ չենք թէ որոշ կերպով են)»: Այն ատեն խընդրոյն վրայ ծանրանալու նպատակ չունենալով՝ հարեւանցի արտայայտուելով կ'անցնէի. իսկ այժմ միջամուխ կ'ըլլամ այս կարեւոր խնդրոյն՝ վերջնականապէս զայն որոշ դիրքի մը վրայ դնել կարենալու համար, եւ ցոյց տալու համար թէ Հայկական Վիշապ գորգերուն գծագրութիւնները իրապէս Վիշապի գաղափարէն եւ նպատակով են: Աւելցընելով անշուշտ որ մեզի ծանօթ վիշապածեւ գծագրութեամբ գորգերը Հայկական են: Անոնց խմբաւորումը եւ դասակարգումը որ կարեւոր է նիւթէս անջատ ըլլալով ուրիշ մասաւոր առթիւ մը նկատի պիտի առնեմ:

Ինծի ծանօթ հեղինակութիւններ տարակոյս չունին Վիշապ գորգերուն վիշապածեւ գծագրութեանց Վիշապ ըլլալուն մասին, եւ սակայն անոնց մօտ խնդրին խորութիւնը չէ չափուած եւ ոչ ալ այդպէս ըլլալու պատճառը կամ պատճառները նկատի առնուած են: W. A. Hawley կ'ըսէ թէ ինք անոնց, վիշապ գորգերուն մէջ, կը տեսնէ «գծագրութիւններ մեծդի ծաղիկներու եւ վիշապներու»³: Dr. F. R. Martinի կարծիքն ալ ասկէ չի տարբերիր. նոյն գաղափարը կը պահէ նաեւ Mr. A. U. Pope եւ ուրիշներ, թէեւ ամէնքն ալ իրարմէ քիչ տարբերելով այդ վիշապին ներշնչման աղբիւրի մասին: Մեծագոյն մաս մը այս հեղինակներէն Հայկական Վիշապ գորգերու գծածեւերը եւ Վիշապը կը տանին Չինական կամ կեղերոնական Ասիոյ երկիրները, եւ հոն կ'երեւակայեն անոնց սկզբնավայրը, կարծելով որ միջին դարերուն կամ գուցէ ժ դարէն առաջ իսկ, Վիշապը (ըստ ոմանց Պարսից միջնորդութեամբ) եկաւ գրաւել խնդրոյ առարկայ իր տեղը՝ Հայկական

1. Անախտ, նոր շրջան Բ. տարի Թիւ 3 եւ 5-6.
2. Դանք, նոր շրջան, Կ. Պոլիս, Թիւ 36 (1919).
3. Հայկական վիշապ գորգերը առասպել են: — Պատասխանս Mr. A. U. Popeի. Բազմապէս 1930 էջ 416.
4. Oriental Rugs. New York, 1927, էջ 91.